Ի՞նչպես փոխել բաժանորդագրության տեսակը

Անցում Ucom Դելֆին, Թիթեռ, Պանտերա, Արծիվ և Բացառիկ սակագնային պլանից Ucom Բիզնես ծառայության

Եթե ցանկանում եք դառնալ Ucom Բիզնես ծառայության բաժանորդ, նախ անհրաժեշտ է լուծել
ՁերԴելֆին, Պանտերա, Թիթեռ, Արծիվ կամ Բացառիկ ամսական բաժանորդագրության ծառայության բաժանորդային պայմանագիրը, ապա Բիզնես փաթեթի պատասխանատուի համաձայնությամբ ընդգրկվել փաթեթում կամ կնքել Ucom Բիզնես ծառայության նոր բաժանորդային պայմանագիր: Անցում կատարելու համար անհրաժեշտ է վճարել առկա բացասական հաշվեկշիռը և այլ պարտքերը: Փոփոխությունն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերը ստորագրելու պահից: Այս դեպքում ամսավճարը ենթակա է ամբողջությամբ գանձման:

Դելֆին, Պանտերա, Թիթեռ, Արծիվ կամ Բացառիկ սակագնային պլանից Ucom Բիզնես ծառայության անցնելիս եթե Դուք բացասական հաշվեկշիռ չունեք և Ձեր հաշվեկշռին առկա է դրական մնացորդ (կատարած հավելյալ լիցքավորում), ապա այդ գումարը չի զրոյացվում և փոխանցվում է Ձեր անհատական ենթահաշվին: Ucom Թիթեռ-ից անցում կատարելու դեպքում չօգտագործված ամսավճարը չի փոխանցվում Ձեր անհատական ենթահաշվին:

Կուտակված բոնուսային միավորները, ակտիվ ծառայությունների փաթեթները, ավտոմատ ակտիվացված առաջարկները և Սիրելի համարն ապաակտիվացվում են: Նշենք նաև,
որ Դելֆին, Պանտերա, Թիթեռ, Արծիվ կամ Բացառիկսակագնային պլաններից Ucom Բիզնես ծառայության անցնելու դեպքում հնարավոր է, որ Ձեր հեռախոսահամարը ժամանակավորապես (1 աշխատանքային օր) ակտիվ չլինի:

Անցում Դելֆինից, Թիթեռից, Պանտերաից, Արծիվից կամ Բացառիկից Ucom Կանխավճարային ծառայության

Եթե Դուք Դելֆին, Պանտերա, Թիթեռ, Արծիվ կամ Բացառիկ սակագնային պլանների բաժանորդ եք և ցանկանում եք դառնալ Ucom Կանխավճարային ծառայության բաժանորդ, ապա անհրաժեշտ է այցելել Ucom սպասարկման սրահ, ստորագրել համապատասխան դիմում/համաձայնագիր, բացասական հաշվեկշռի կամ այլ պարտքերի դեպքում վճարել համապատասխան գումարը: Եթե Դուք ձեռք եք բերել բջջային
հեռախոսԴելֆին, Պանտերա, Թիթեռ, Արծիվ կամ Բացառիկ սակագնային

պլանների համար նախատեսված բացառիկ գնով և ունեք չավարտված պարտավորություն, ապա վճարում եք նաև բաժանորդային պայմանագրով սահմանված գումարները և տուգանքը: Ucom Կանխավճարային ծառայությանն անցում կատարելու դեպքում փոփոխությունը կսկսի գործել փոփոխությունը կատարելու օրվան հաջորդող ամսվա 1-ից:
Եթե Դուք բացասական հաշվեկշիռ չունեք և Ձեր հաշվեկշռին ունեք չսպառված գումար (կատարած հավելյալ լիցքավորում), ապա այդ գումարը չի զրոյացվում և փոխանցվում է Ձեր Ucom Կանխավճարային ծառայության հաշվեկշռին: Ucom Թիթեռ-ից Ucom Կանխավճարային ծառայության անցնելու դեպքում չօգտագործված ամսավճարը չի փոխանցվում Ձեր հաշվեկշռին:
Դիմումը/համաձայնագիրը ներկայացնելու պահից Դուք այլևս չեք կարող օգտվելԴելֆին, Պանտերա, Թիթեռ, Արծիվ կամ Բացառիկ սակագնային պլանների համար նախատեսված բացասական հաշվեկշռի սահմանաչափից: Եթե արդեն սպառել եք Ucom Դելֆին, Պանտերա, Թիթեռ կամ Բացառիկ-ի Ձեր սակագնային պլանում ներառված րոպեները, գումարը, SMS-ները, ՄԲ-երը և բացասական հաշվեկշռի սահմանաչափը, ապա Ucom-ի ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է վերալիցքավորել հաշիվը:
Անցում կատարելիս պահպանվում են Ձեր կուտակած բոնուսային միավորները, դրական հաշվեկշիռը, ավտոմատ ակտիվացված առաջարկները, Ձեր ընտրած Սիրելի համարը, ինչպես նաև ակտիվ ծառայությունների փաթեթները, որոնք նախատեսված են նաև Ucom Կանխավճարային ծառայության համար:
Անցում Դելֆին, Թիթեռ, Պանտերա, Արծիվ կամ Բացառիկ սակագնային պլաններից Ucom Հետվճարային կամ ՈՒնիվերսալ սակագնային պլանների
Եթե Դուք օգտվում
եք Դելֆին, Պանտերա, Թիթեռ, Արծիվ կամ Բացառիկ սակագնային պլաններից և ցանկանում եք դառնալ Ucom Հետվճարային կամ ՈՒնիվերսալ սակագնային պլանի բաժանորդ, ապա անհրաժեշտ է այցելելUcom սպասարկման սրահ, ստորագրել համապատասխան դիմում/համաձայնագիր և բաժանորդային պայմանագիր, իսկ բացասական հաշվեկշռի կամ այլ պարտքերի առկայության դեպքում՝ նաև վճարել համապատասխան գումարը: Ucom Հետվճարային կամ ՈՒնիվերսալ-ի անցում կատարելու դեպքում փոփոխությունը կսկսի գործել փոփոխությունը կատարելու օրվան հաջորդող ամսվա 1-ից:

Եթե Դուք բացասական հաշվեկշիռ չունեք և Ձեր հաշվեկշռին ունեք չսպառված գումար (կատարած հավելյալ լիցքավորում), ապա այդ գումարը չի զրոյացվում և այն փոխանցվում է
Ձեր Հետվճարային կամ ՈՒնիվերսալ-ի հաշվեկշռին: Թիթեռ-
ից Հետվճարային-ի կամ ՈՒնիվերսալ-ի անցնելու դեպքում չօգտագործված ամսավճարը չի փոխանցվում Ձեր հաշվեկշռին:
Դիմումը/համաձայնագիրը ներկայացնելու պահից Դուք այլևս չեք կարող օգտվելԴելֆին, Պանտերա, Թիթեռ, Արծիվ կամ Բացառիկ սակագնային պլանների համար նախատեսված բացասական հաշվեկշռի սահմանաչափից և եթե արդեն սպառել
եք Դելֆին, Պանտերա, Թիթեռ, Արծիվ կամ Բացառիկ սակագնային պլաններում ներառված րոպեները, գումարը, SMS-ները, ՄԲ-երը և բացասական հաշվեկշռի սահմանաչափը, Ucom-ի ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է վերալիցքավորել հաշիվը:
Անցում կատարելիս Ձեր կուտակած բոնուսային միավորները, ընտրած Սիրելի համարը, դրական հաշվեկշիռը, ավտոմատ ակտիվացված առաջարկները, ինչպես նաև՝ակտիվ ծառայությունների փաթեթները, որոնք նախատեսված են
նաև Հետվճարային կամ ՈՒնիվերսալ-ի համար, պահպանվում են: